ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ *ԵՎ ԼՐԱՑՈՒՄ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի Ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 13-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում «ընդերքի պետական տեսչությանը, բնապահպանական պետական տեսչությանը» բառերը փոխարինել «ընդերքի օգտագործման եւ պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ, 16-րդ եւ 17-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել, իսկ 10-րդ կետում «կառավարումը եւ վերահսկողությունն» բառերը փոխարինել «կառավարումն» բառով.

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«2. Ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) ընդերքօգտագործման բնագավառում շրջակա միջավայրի պահպանության պետական քաղաքականության ձեւավորմանը մասնակցությունը.

2) ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը.

3) ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի, հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման եւ հրաժարման նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացումը.

4) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունումը.

5) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից

համայնքների բնակչության անվտանգության եւ առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգի մշակումը.

6)շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումների պլանի կամ ծրագրի հաստատումը.

7) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգի մշակումը.

8) ընդերքօգտագործման թափոնների եւ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգի մշակումը.

9) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը եւ ընդերքօգտագործման թափոնների կառավարմանը եւ վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջների եւ չափանիշների մշակումը.

10) լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչների մշակումը.

11) օգտակար հանածոյի մշակման համար անհրաժեշտ վտանգավոր նյութերի օգտագործման առավելագույն սահմանաչափերի որոշման ընթացակարգի հաստատումը

12) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու կարգի մշակումը.

13) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների ընդունումը, դրանց վերաբերյալ միասնական համակարգի ստեղծումը, վարումը, տնօրինումը և հրապարակայնացումը.

14) ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հաստատումը.

15) սույն օրեսգրնքով նախատեսված այլ իրավասություններ:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ մասով՝

«2.1. Ընդերքի օգտագործման հետ կապված բնապահպանության եւ ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավասություններն են՝

1) ընդերքօգտագործման բնագավառում շրջակա միջավայրի պահպանության նորմերի, պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը.

2) հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման եւ հրաժարման նախագծերի, ծրագրերի կատարման նկատմամբ բնապահպանական վերահսկողության իրականացումը.

3) բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված մշտադիտարկումների պլանի կամ ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

4) սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավասություններ:»:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 74-ից 77-րդ հոդվածները:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: